



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հոկտեմբերի 2019թ. թիվ 602-Ա

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի «Առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգը և դեպքերը սահմանելու մասին» N 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. ՀՀ Լոռու մարզպետարանին վերապահված գործունեության ոլորտում որոշակի ծրագրերի իրականացման նպատակով հաստատել ՀՀ Լոռու մարզպետարանում փորձագետի կողմից իրականացվող աշխատանքային ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

18/10/19

X 
ԱՐԱՄԻՆԱՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 18
ք.Վանաձոր

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ Լոռու մարզում ներդրումային ծրագրերի ներգրավման և դրանց իրագործմանն ուղղված համակարգման աշխատանքներն իրականացնող փորձագետի

Փորձագետի ներգրավելու դեպքը և հիմնավորումները

Փորձագետը ներգրավվում է Լոռու մարզում պոտենցիալ ներդրողների ներդրումային ծրագրերի համակարգման ոլորտի գործառույթներն իրականացնելու նպատակով:

Փորձագետի կողմից իրականացվող գործառույթներն են՝

1. Մարզի զարգացման գերակա ուղղություններին համապատասխան ներդրումային հնարավորությունների վերհանում,
2. Կատարված ուսումնասիրությունների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացում,
3. Ներդրումային ֆոնդերի հայթայթում,
4. Ներդրումային բազայի ստեղծում,
5. Ծրագրերի ներկայացում ներդրումային ֆոնդերին:

Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը

Փորձագետը ներգրավվում է մեկ տարի ժամկետով:

Ակնկալվող արդյունքը

Ներդրումների ծավալների ավելացում, նոր աշխատատեղերի ստեղծում:

Հաշվետվություններ ներկայացնելու ժամկետները

Փորձագետը եռամսյակը մեկ ներկայացնում է հաշվետվություններ:

Աշխատանքների գնահատման չափանիշները

Աշխատանքը գնահատվում է ըստ փուլերի՝ երեք ամիսը մեկ և վերջնական փուլ: Աշխատանքը գնահատվում է երեք ամիսը մեկ ներկայացված հաշվետվությունների հիման վրա, որի արդյունքում երևում է, թե տվյալ ժամանակահատվածում փորձագետն իր առջև դրված խնդիրների որ մասն է իրականացրել:

Կատարված աշխատանքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

Աշխատանքների գնահատման արդյունքների ամփոփման ժամկետները

Հաշվետվության ներկայացումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Աշխատանքը կատարելու համար փորձագետին ներկայացվող պահանջները

1. Գործարարություն և վարչարարություն ոլորտի բարձրագույն կրթություն,
2. Անգլերեն լեզվի ազատ տիրապետում,
3. Պետական և միջազգային կառույցների կողմից իրականացվող ծրագրերի հետ առնվազն մեկ տարվա աշխատանքային փորձ,
4. Հաշվետվությունների կազմման, տեխնիկական առաջադրանքների մշակման, վերլուծությունների կատարման փորձ,
5. Համակարգչով և ժամանակակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,
6. Թիմում աշխատելու ունակություն:

ՀՀ ԼՈՒՌԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

10/18/2019

X



ՎԱԼԵՐԻ ԽԱՂԱՏՐՅԱՆ

Վ.ԽԱՂԱՏՐՅԱՆ